

իրի յորժամ հանին զՏիրատուր պատրիարզ յաթոռոյ, եղին ի տեղի նորա զսա ինքն զՄեկքիսէթ: Այլ մինչչեւ էր նորա կացեալ յայնմ իշխանութեան ամ մի, ընկեցին զնա ի պատրիարզութենէ, եւ եղին ի տեղի նորա զՅովհաննէս երրորդ. որում յաջորդեաց Գրիգոր Կեսարացի: Իսկ Մեկքիսէթ ելեալ զնաց անդրէն յէջմիածին, եւ մատնեցաւ ի ձեռս պարտատեարց. եւ ապա փախուցեալ ի ձեռաց նոցա՝ զնաց եւ եղիտ զԴաւիթ կաթողիկոս. եւ եկաց ընդ նմա ի Թաքստի. եւ երկօքին եւս ըմբռնեալ ի տարակուսի՝ հեծէին անդադար ի ձեռաց պարտատեարց» (Չամչեան, Գ., 535): Չամչեանի անծանօթ է Աւետիսի անձնաւորութիւնը, այս պատճառաւ ալ անոր յիշատակութիւնը չէ ըրած:

Մեկքիսեղեկի ուղեւորութիւնն ի Կ. Պոլիս եւ պատրիարքական աթոռը նստիլը Չամչեան կը դնէ 1599 եւ 1600 տարիներու մէջ: Յայտնի է ժամանակակից յիշատակարանէ մը, թէ 1600ին Կ. Պոլիս էր Մեկքիսեղեկ. Ղազար Եպիսկոպոս կ'օրինակէ Սաղմոսարան մը «Թվին Ռիթ». ի մայրաքաղաք Ըստամբուլ, ի Թաղաւորութեան սուլթան Մուրատի՝ որդւոյն սուլթան Մահմատի. ի պատրիարզութեան տէր Մեկքիսէթ կաթողիկոսի, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ (զօրավարի) որ Սումանաստիր ասի»⁴:

⁴ Սարգիսեան, Տուցակ Միտիթ. Մատենադարանի Վեներաբլ, Ա., 312: